ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2025 թվականի N 1941 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱ-ԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1418-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի «Հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ մոնիտորինգի տեղեկատվական համակարգի ներդրման առանձնահատկությունները հաստատելու մասին» N 1418-Ն որոշմամբ հաստատված հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) հավելվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը.».

2) հավելվածի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով.

«5) Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը.

6) Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը.

7) Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը։».

3) հավելվածի 6-րդ կետի 8-րդ ենթակետը «տվյալների անվտանգության» բառերից հետո լրացնել «, ներառյալ՝ համակարգում մուտքային գործողություն-ների վերաբերյալ հաշվառման (լոգավորման) և լոգերի պահպանման» բառերով.

4) հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետը «անվտանգության» բառից հետո լրացնել «, ներառյալ՝ համակարգում մուտքային գործողությունների վերաբերյալ հաշվառման (լոգավորման) և լոգերի պահպանման» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ